

**«Մենք ունենք ապրանքաշրջանառության բարձր աճ Եվրասիական տնտեսական միության բոլոր երկրների հետ».** վարչապետ

6-ր հոկտեմբերի, 2017 թ.

<http://gov.am/am/news/item/13200/>

Վարչապետ Կարեն Կարապետյանն այսօր ներկա է գտնվել Հայ-ռուսական միջտարածաշրջանային վեցերորդ և Եվրասիական գործընկերության երկրորդ միջազգային համաժողովների համատեղ լիագումար նիստի բացմանը: Ողջունելով մասնակիցներին և հյուրերին՝ վարչապետը համաժողովների օրակարգը չափազանց կարևոր և արդիական է համարել: Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրելով Հայաստանում այսօր առկա հնարավորությունների վրա՝ նա նշել է. «Հայաստանը, լինելով Եվրասիական տնտեսական միության անդամ, այսօր կարող է լավ հարթակ լինել մեր բարեկամների համար և դիտարկվել ոչ միայն որպես զուտ հայաստանյան ներքին շուկա, այլև որպես հարթակ մեր հարևան երկրի՝ Իրանի հետ հարաբերությունները զարգացնելու համար: Առաջիկայում մենք ավարտում ենք Իրանի հետ ազատ տնտեսական գոտու կազմակերպման շուրջ աշխատանքները և իրանական կողմի հետ պայմանավորվում ենք սահմանին հատուկ ռեժիմի մասով: Հայաստանն այսօր ունի GSP+ և GSP արտոնյալ ռեժիմներ՝ համապատասխանաբար ԵՄ երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ: Կարծում եմ, որ հնարավորության դեպքում ճիշտ կլինի քննարկել նաև այս աշխատանքներում մեր երկրների մասնակցության հեռանկարները»:



Անդրադառնալով Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովին՝ կառավարության ղեկավարն արձանագրել է, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների միջկառավարական բոլոր մակարդակներում տնտեսական համագործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, բայց առկա ներուժը դեռ լիարժեք չի օգտագործվել: «Ավելին, ներուժը շատ ավելին է, քան այսօր գոյություն ունեցողը: Վստահ եմ, որ միջտարածաշրջանային հորիզոնական շփումը կարևոր բաղադրիչ է, առավել ևս, որ վերջին շրջանում մենք Հայաստանի կառավարությունում ընդգծել ենք մեր մարզերի ղեկավարների հաշվետվողականության տնտեսական բաղադրիչի կարևորությունը:

Մենք ունենք ապրանքաշրջանառության բարձր աճ Եվրասիական տնտեսական միության բոլոր երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի հետ, ունենք ներմուծման և արտահանման աճ: Ռուսաստանյան ներքին անձնագրերով Հայաստան այցելելու հնարավորության վերաբերյալ որոշման ընդունումից հետո ունենք 37 տոկոս աճ զբոսաշրջության ոլորտում», - նշել է վարչապետ Կարապետյանը և բոլորին արգասաբեր ու արդյունավետ աշխատանք մաղթել:



Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ ֆորումի շրջանակում անցկացվելու են թեմատիկ նիստեր՝ երկկողմ միջտարածաշրջանային համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների, արդյունաբերության, նորարարության, զբոսաշրջության, գյուղատնտեսության և հումանիտար ոլորտներում զարգացնելու և ընդլայնելու, այս մակարդակում ինտեգրացիոն գործընթացները խթանելու վերաբերյալ:

Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովի աշխատանքներին մասնակցում են կառավարությունների, գործարար և փորձագիտական շրջանակների ներկայացուցիչներ, համաշխարհային հայտնի ընկերությունների ղեկավարներ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Քաթարից, Հարավային Կորեայից, Հնդկաստանից և այլն:

*ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն*

**ՌԴ նահանգների և ՀՀ մարզերի ներկայացուցիչները քննարկել են  
միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանը  
վերաբերող հարցեր**

**6-ը հոկտեմբերի, 2017 թ.**

<http://mtad.am/hy/news/item/2017/10/06/mtadnist06/>

Այսօր Երևանում մեկնարկել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովը, որը կազմակերպվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման նախարարության կողմից: Համաժողովն իր աշխատանքները սկսել է Եվրասիական գործընկերության երկրորդ միջազգային համաժողովի հետ զուգահեռ:

Համաժողովների համատեղ լիազումար նիստի բացմանը ներկա են եղել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը, ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար Արմեն Գևորգյանը, ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարար, ռուսական պատվիրակության ղեկավար Դենիս Մանտուրովը, այլ պաշտոնատար անձինք, գործարարներ:

Համաժողովի մասնակիցներին իրենց ողջույնի ուղերձն էին հղել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինը: ՀՀ Նախագահն իր ուղերձում նշել է, որ Հայաստանն առաջնահերթ ուշադրություն է հատկացնում Ռուսաստանի հետ բազմաշերտ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: «Համագործակցության ընդլայնման գործում ակտիվ դեր են խաղում մեր երկրների տարածաշրջանները, որոնց համար հայ-ռուսական համաժողովը դարձել է տարածաշրջանների տեղական իշխանությունների, գործարար և փորձագիտական համայնքների ներկայացուցիչների անմիջական շփման հարթակ: Ուրախալի է, որ հայ-ռուսական միջտարածաշրջանային նախորդ համաժողովների ընթացքում մշակված առաջարկները կյանքի են կոչվում համատեղ նախաձեռնությունների միջոցով: Անկասկած, ինտեգրացիոն գործընթացները նպաստում են միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանը: Առաջին հերթին դա

վերաբերում է Եվրասիական տնտեսական միությանը, որի շնորհիվ ապակենտրոնացած փոխգործակցությունը բարձրացել է նոր, ավելի բարձր մակարդակի»,-նշված է ՀՀ Նախագահի ուղերձում:

ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինն իր ուղերձում ընդգծել է ՌԴ և ՀՀ միջև համագործակցության զարգացման կարևորությունը՝ առանձնացնելով հատկապես ապակենտրոնացված համագործակցությունը: ՌԴ Նախագահը հույս է հայտնել, որ համաժողովի ընթացքում մանրամասն կքննարկվեն արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում համագործակցությանը, զբոսաշրջության, հումանիտար և նորարարական բնագավառներում հեռանկարային նախաձեռնություններին վերաբերող հարցեր:



ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը ողջունելով մասնակիցներին և հյուրերին՝ համաժողովների օրակարգը չափազանց կարևոր և արդիական է համարել: Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրելով Հայաստանում այսօր առկա հնարավորությունների վրա՝ նա նշել է, որ Հայաստանը, լինելով Եվրասիական տնտեսական միության անդամ, այսօր կարող է լավ հարթակ լինել և դիտարկվել ոչ միայն որպես զուտ հայաստանյան ներքին շուկա, այլև որպես հարթակ հարևան երկրի՝ Իրանի հետ հարաբերությունները զարգացնելու համար: Անդրադառնալով Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովին՝ կառավարության ղեկավարն արձանագրել է, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև միջկառավարական բոլոր մակարդակներում համագործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, բայց առկա ներուժը դեռ լիարժեք չի օգտագործվել: «Ավելին, ներուժը շատ ավելին է, քան այսօր գոյություն ունեցողը: Վստահ եմ, որ միջտարածաշրջանային հորիզոնական

շփումը կարևոր բաղադրիչ է, առավել ևս, որ վերջին շրջանում մենք Հայաստանի կառավարությունում ընդգծել ենք մեր մարզերի ղեկավարների հաշվետվողականության տնտեսական բաղադրիչի կարևորությունը», - նշել է վարչապետ Կարապետյանը և բոլորին արգասաբեր ու արդյունավետ աշխատանք մաղթել:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովի շրջանակում կայացած «Միջտարածաշրջանային համագործակցությունը՝ որպես ինտեգրացիայի հիմք» թեմատիկ նիստում ելույթներով հանդես են եկել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՌԴ տնտեսական զարգացման նախարարության արտաքին տնտեսական գործունեության զարգացման և կարգավորման վարչության ղեկավար Վիտալի Գուդիինը, ՌԴ տնտեսական զարգացման նախարարության ԱՊՀ երկրների հետ տնտեսական համագործակցության և Եվրասիական ինտեգրացիայի վարչության ղեկավար Ռաֆայել Աբրամյանը, այլ պաշտոնատար անձինք:



ՌԴ նահանգների, ՀՀ մարզերի ներկայացուցիչների և գործարարների մասնակցությամբ նիստին քննարկվել են միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանը վերաբերող հարցեր: Նիստի շրջանակներում տեղի է ունեցել նաև ճեպագրույց, որի ընթացքում Վաչե Տերտերյանը և Վիտալի Գուդիինը պատասխանել են լրագրողներին հուզող հարցերին:

ՏԿԶՆ հասարակայնության հետ կապերի բաժին